ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 ապրիլի 2019 թ. N 314-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 27-ի «Օտարերկրյա պետություններից ներմուծվող և Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 194-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետի 2-րդ ենթակետում «ջերսեյ ցեղատեսակին» բառերը փոխարինել «ջերսեյ, ֆլեկֆի, շվից, հոլշտին, սիմենթալ, սևաբղետ և աբերդին-անգուս ցեղատեսակներին» բառերով.

2) 9-րդ կետում «2017 թվականի պետական բյուջեում» բառերը փոխարինել «պետական բյուջեով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***